ՇՈՂԱԳԱՎԱՆՔ ԵԿԵՂԵՑՈՒՑ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԽԵՑԵՂԵՆ ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ՄԱՍԻՆ

Հ. Ս. ԵՍԱՅԱՆ

1983 թ. Հայաստանի պատմության պետական թանգարանի արշավախմբի կողմից, Մարտունու շրջանի Զորագյուղ գյուղի տարածքում գտնվող Շողագավանք եկեղեցուց հարավ, «Մհերի գուռ» կոչվող բլրի վրա, տնտեսական հորի մեջ (խոր.՝ 1 մ) հայտնաբերվեց ոչ մեծ կարասի մեջ պահված տասնչորս քրեղան։ Կարմիր, բարձրորակ, անգոբապատ կարասն ունի ուռուցիկ իրան, ոչ բարձր, նեղացող վիզ, դուրս ճկված կլորավուն շուրթ, ցածր նստուկով հարթ հատակ։ Անոթը վզի կենտրոնում ունի ուսերի վրա իջնող, կտրվածքում կլոր, երկու կոր կանթեր, որոնք վերնամասում հարդարված են ուռուցիկ ելուստներով։ Իրանի վերին մասում, երկու կողմից կանթերի միջև արված են ուռուցիկ, սրածայր, կամարաձև կեղծ կանթեր։ Նման կարասներ Հայաստանում հայտնի են Դվինից, Մակարավանքից, Բերքաբերից[1] և այլն։

Կարասի կողքին հայտնաբերվել է կխսով շափ պահպանված, արտաքինից դեղին, ջնարակապատ խփի բեկոր։ Տափակ, կլոր իրանով այս խոփն ունի 30 սմ տրամագիծ, միջին մասում՝ 3 սմ, կողերում՝ 1 սմ հաստություն։ Մողերը հարդարված են ճզմված հարդանախշով։ Խփի կանթը ներկայացնում է միաձույլ, կլոր գլան (վերին տրամագիծը՝ 3 սմ)։ Կենտրոնում պահպանված է 1,5 սմ տրամագիծ ունեցող գոգավոր հարգանախշ։ Խփերի այս տիպը հայտնի է Դվինի՝ XII—XIII դդ. շերտերից[2], Անբերդից[3], Դիլիջանից[4], Արգեհովտի[5] ամրոցից և այլն։ Հիշարժան է այն փաստը, որ Հայաստանում և Անդրկովկասում խփերը հանդես են գալիս թուրլ կամ բարձրորակ անգոբով։ Այս խուփը հայտնի եզակի օրինակներից է։ Ջնարակված խփերի բեկորներ գտնվել են նաև Դվինում (նյութերը հրատարակված չեն)։

Գտնված քրեղանները բաժանվում են երկու հիմնական խմբի՝ կարմիր, անգոբապատ մակերեսով և ջնարակապատ։ Կարմիր, անգոբապատ քրեղանները թվով տասն են, ունեն 24—26 սմ տրամագիծ, 8—10 սմ բարձրություն։ Բոլոր քրեղանները խորն են, ուղիղ կամ ներճկված եզրերով, կլորավուն կամ դուրս ճկված շուրթերով։ Մեկ քրեղանի եզրերը խիստ ընդգծված են։ Քրեղաններից երեքի հատակները օժտված են ոչ մեծ նստուկներով, մյուսների հատակները օղակաձև են։ Քրեղաններից մեկի հատակը հարդարված է խզզված խաչով։ Նախշազարդման այս եղանակը հայտնի է Հայաստանում. հյուսիս-արևելյան Հայաստանում հանդիպում է Դիլիջանում, Մակաեղցի բնակատեղիում, Տավուշում։ Քրեղաններից երկուսը ներսից գունազարդված են կարմիր ներկով, արված են եռանկյունիներ և շրջանակներ։ Նման նախ-

---

1 Ա. Ա. Քալանթարյան, Դվինի նյութական մշակույթը 4—8-րդ դդ., Երևան, 1970։ Նույնի՝ Դվին, կենտրոնական թաղամասի պեղումները 1964—70 թթ., Երևան, 1976, էջ 76, Հ. Ս. Եսայան, Մակարավանքի միջնադարյան խեցեղենը (Պատմա-բանասիրական հանդես, 1981, № 1, էջ 226), Г. С. Есаян, Разведочные раскопки в Бсркабере (ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտություններին, 1985, № 6)։

2 Կ. Գ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 76։

3 Ս. Վ. Հարությունյան, Անբերդ, Երևան, 1978, նկ. 83։

4 Г. С. Есаян, Материальная культура бассейна реки Агстев в развитом средневековье. Ереван, 1992, табл. 22, р. 9.

5 Նույն տեղում, աղ. 13, նկ. 4։

շեր երեում են ևս երեք քրեղանների վրա, սակայն ներկը այստեղ քերված է։ Այս տիպի քրեղաններն իրենց լայն զուգահեռներն են դտնում Հայաստանի XII—XIII դդ. հուշարձաններում՝ Դվին, Գառնի, Ամբերդ և այլն։

Քրեղանների երկրորդ խումբը կազմում են ջնարակած անոթները։ Նրանցից երկուսը ոչ մեծ քրեղաններ են՝ (21 սմ տրամագծով և 8 սմ բարձրությամբ) կլորավուն բարձրացող իրաններով, ուղիղ եզրերով, կլոր դուրս ճկված շուրթերով, օղակաձև հատակներով։ Երկու քրեղանների եզրերն ու շուրթերը արտաքինից ծածկված են կանաչ ջնարակով։ Մնացածի արտաքին մակերեսը զուրկ է անգորից և ջնարակից։ Երկու քրեղանների ներքին մակերեսը պատված է դեղնականաչավուն և դեղին ջնարակով։ Քրեղանների իրանների հատակներին ներսից պահպանվել են թրծման եռոտանիների հետքեր։ Դեղին ջնարակով քրեղանը ներսից հարդարված է շագանակագույն ջնարակի երկուական գծերով արված հնգաթև աստղով, թևերի միջև տեղադրված են պարուրաձև շրջանակներ։ Մի քրեղանը հարդարված է նույն եղանակով արված քառաթև խաչով, որի թևերի միջև տեղադրված են նույնպիսի պարուրաձև շրջանակներ։ Երկու քրեղանների ընդհանուր զարդամոտիվը շրջագծված է զուգահեռ գծերով։ Այս տիպի քրեղանները շատ տարածված են եղել զարգացած միջնադարում։ 1984 թ. Դվինի պեղումների ընթացքում այս տիպի քրեղաններ հայտնաբերվել են արհեստանոցից, ուր պատրաստվել են միայն նման անոթներ[6]։

Երրորդ քրեղանը վերոհիշյալների նման ունի օղակաձև հատակ և վիալաձև իրան։ Եզրերի արտաքին կողմերը և իրանի վերին մասը ծածկված են սպիտակ անգորով։ Իրանը ներսից պատված է կանաչ ջնարակով, եզրերը հարդարված են խիստ ոճավորված եռաշար, պարուրաձև նախշով, հատակը ներսից հարդարված է չորս հատվող քառանկյունիներով, որոնք կազմում են շեղանկյուններ և հավասարակողմ եռանկյուններ։

Իր տեսակի մեջ հազվագյուտ հետաքրքրություն է առաջացնում կլորավուն իրանով, օղակաձև նստուկով, ուղիղ եզրերով և ճկված շուրթերով ջնարակված քրեղանը (տրամագիծը՝ 21 սմ, բարձրությունը՝ 9 սմ)։ Նրա արտաքին մակերեսը ծածկված է բաց կանաչավուն ջնարակով, որի վրա տեղ-տեղ հանդիպում են մուգ կետեր։ Ներսը եզրավորում են երկու զույգ գծեր, որոնց միջև անցնում է կիսակլոր հատվող գծերի հարդանախշ՝ առաջացնելով յուրատեսակ շղթա։ Իրանի ներսից, հատակին և կենտրոնում պատկերված է երկար հագուստով մարդկային կերպարանք։ Ձգեստի տակից երևում են պրոֆիլով պատկերված ոտքերը։ Արմունկներում ծալված ձեռքերը վեր են բարձրացված, ափերը բացված՝ չուված բութ մատներով։ Աջ ձեռքի արմունկից կախված է վարդյակով զարդարված, զամբյուղ հիշեցնող մի իր, որը կարող է լինել խիստ ոճավորված խնկարկման անոթ՝ բուրվառ։ Աջ արմունկի մոտ տեղադրված են զույգ վարդյակներ։ Գլուխը ոճավորված է, երեսը երկարավուն է՝ ձգված, անհավասար արտոսկրերով։ Աչքերը նշաձև են, խիստ արտահայտված մուգ բիբերով և թավ հոնքերով։ Քիթը սուր է, ուղիղ, թույլ արտահայտված ռնգերով։ Բերանը վերին շուրթի մասում քիչ գոգավոր է, թեքված։ Կզակը ծածկված է մոտ ջնարակով արված եռանկյունաձև սուր մորուսով, գլխին դեպի վեր յայնացող տխարա է (գլխարկ), որի երկու ելուստ ունեցող վերին մասը հարդարված է զույգ շրջանակներով։ Տխարայի դիմային կողմում երևում են քառանկյուններ։ Պատկերի ուսերը թեք են, աջը՝ քիչ բարձրացված։ Ձգեստը ծածկում է ֆիդուրի սրունքները, երկար թեքերը կիպ ծածկված են դաստակների վրա։ Կուրծքը հարդարված է խաչվող զույգ լանջադտիներով։ Ձգեստի փեշը հարդարված է երկշար զուգահեռ, զույգ գծերով, որոնց ներքևի շարքում անցնում է շրջանակաձև հարդանախշ,

6 Նյութերը հրատարակված չեն։ Դրանք մեզ տրամադրել է Դվինի արշավախմբի ղեկավար, պատմ. գիտ. դոկտոր Արամ Քալանթարյանը, որի համար հայտնում ենք մեր խորին շնորհակալություն։

վերին շարքում տեղադրված է հայելեղու «Սբ. Հանես» արձանագրությունը, որը Սուրբ Հովհաննեսի բարբառային ձևն է։

Ջնարակած անոթների վրա մարդկային պատկերները կազմում են ոչ մեծ, բայց բնորոշ խումբ, ըստ որում, հանդիպում են և տղամարդկանց, և կանանց պատկերներ։ Դրանց թվին է պատկանում Անիից հայտնաբերված թասի հատակին եղած կնոջ պատկերը։ Նրա ձախ ձեռքը դրված է կողքին, իսկ աջ ձեռքով ըստ երևույթին բռնել է հայելին։ Դեմքը ձղված է, ունի մեծ քիթ։ Մատները ծածկում են գլխաշորը։ Զգեստը երկգույն է (կանաչ, դեղին)[7]։ Այս թասը առաջին անգամ հրատարակել է Հ. Օրբելին՝ այն համարելով ազգային արվեստի ինքնատիպ նմուշ[8]։ Իր պատկերագրական հատկանիշներով, այս պատկերը նման է մանրանկարների օրինակներին, որը հնարավորություն է տվել Բ. Շելկովնիկովին այն համեմատել Վայոց ձորի՝ 1317 թ. ձեռագրում պատկերված Գրիգորի կնոջ՝ Մամախաթունի հետ, որն ընդհանրություններ ունի Անիի թասում պատկերված կնոջ հետ[9]։

Կանանց պատկերներ հանդիպում են Դվինից և Արգիշտիխինիլիից գտնված թասերի վրա[10]։

Տղամարդկանց պատկերներից հատկանշական է Դվինից գտնված ջնարակած թասը, որի հատակին ասեղնագործված հագուստով պատկեր է՝ մեծ գլխով, կարճ մարմնով, ազդեցիկ դեմքով, տարածված թևերով, բացված մատներով։ Գլխին թագ կա։ Նման պատկերներ հանդիպում են Աղթամարի վարդաքանդակներում[11]։

Մարդկանց, հատկապես կանանց պատկերները հանդիպում են նաև հախճապակյա անոթների վրա, սրանց մի մասը հիշեցնում է դիցաբանական ծովահարսներին։ Նման պատկերներ կան մանրանկարներում[12]։

Մարդկային կերպարանքների պատկերումը շատ ավելի հին ավանդույթներ ունի հար և համաշխարհային կիրառական արվեստում։ Մեր քննվող օրինակի նման պրոֆիլավորված ոտքեր հանդիպում են հայ միջնադարյան մանրանկարներում։ Այսպես, Հաղպատի վանքի՝ 1211 թ. Ավետարանում (ծաղկող Մարդարեի նկարում) և XIV—XV դդ. Տաթևի վանքում գրված Ավետարանում՝ ծաղկող Գրիգորի «Ավետում» նկարում[13]։ Նման պատկերներ հանդիպում են նաև XIV—XV դդ. Ղուկասի Ավետարանի պատկերի վրա՝ Անանուն Սյունեցու նկարում[14]։ Գլխարկը ձևով հեռավոր նմանություն է գտնում 1232 թ. գրված Թարգմանչաց ավետարանի «Դժոխք իջնելը» մանրանկարի կերպարներից մեկի գլխարկի հետ[15]։

Ելնելով արձանագրությունից, մեզ թվում է, որ նկարում պատկերված է Հովհաննես Մկրտիչը, որի պատկերը հաճախ հանդիպում է նաև զարգացած միջնադարյան եկեղեցական սպասքի վրա։ Այսպես, Ն. Հակոբյանի նկարագրած միջնադարյան մասնատուփերից մեկի դռնակի վրա կանգնած է

---

7 Б. А. Шелковников, Поливная керамика из раскопок города Ани, Ереван, 1957, с. 16.

8 И. А. Орбели, Каталог Анийского музея древности. Анийская серия, СПб, 1910, с. 54.

9 Б. А. Шелковников, նշվ. աշխ., էջ 17։

10 Ֆրինա Բաբայան, Միջնադարյան Հայաստանի դեղարվեստական խեցեղենը, Երևան, 1981, էջ 68։

11 Ֆրինա Բաբայան, նշվ. աշխ., էջ 69։

12 Ա. Ա. Ժամկոչյան, Միջնադարյան Հայաստանի հախճապակին 9—14-րդ դարերում, Երևան, 1981, էջ 109, աղ. 6, նկ. 4, աղ. 6 ա, նկ. 9, աղ. 7, նկ. 4, 5, աղ. 6ա, № 7։

13 Լ. Ա. Դուռնովո, Հայկական մանրանկարչություն, Երևան, 1969, նկ. 18, 62։

14 Ալվիդա Միրզոյան, Գրիգոր Տաթևացի և Անանուն Սյունեցի, Երևան, 1987, էջ 67։

15 Լ. Ա. Դուռնովո, նշվ. աշխ., նկ. 28։

Հովհաննես Մկրտիչը՝ ուսերին թափվող երկար մազերով, մերկ սրունքներով, ոտաբոբիկ (ջրում կանգնած լինելը նշելու նպատակով), կարճ պարեգոտով, օձիքը՝ արևելյան ձևով իրար բերած, կարճ թևքերով, ձախ ձեռքը՝ ազդրի վրա, աջով օրհնելիս[16]։ Հովհաննես Մկրտչի մեկ այլ պատկեր հանդիպում է Ասորիքից և Պաղեստինից հայտնաբերված բուրվառներից մեկի վրա, ուր նա պատկերված է մկրտության դրվագում՝ գետի մեջ նստած Քրիստոսի գլխին ջուր լցնելիս[17]։

Այսպիսով, Հովհաննես Մկրտչի պատկերը հիմնականում հանդիպում է հայ միջնադարյան մանրանկարներում և արարողական սպասքի վրա։ Հովհաննես Մկրտչի պատկերի մեր օրինակը իր տեսակի մեջ միակն է, որ հանդիպում է խեցեղենի վրա և ուղեկցվում է արձանագրությամբ։ Եզակի է նաև արձանագրության առկայությունը։

Այսպիսով, քննվող հավաքածուն թվագրվում է XII—XIII դդ., իր լայն զուգահեռներն է գտնում Հայաստանի համաժամանակյա հուշարձաններում և, հավանաբար, պատկանել է Շողաղավանքի եկեղեցու բարձրաստիճան հոգևորականի, որն այն թաքցրել է անտեսական հորում՝ վերահաս վտանգը նկատի ունենալով։

О КЕРАМИЧЕСКОЙ КОЛЛЕКЦИИ ИЗ ЦЕРКВИ ШОГАГАВАНК

Г. С. ЕСАЯН

Резюме

В 1983 г. экспедиция Гос. исторического музея Армении неподалеку от церкви Шогагаванк, расположенной близ села Дзорагюх Мартунийского района, обнаружила в небольшом красноангобированном карасе клад керамических сосудов, состоящий из различных мисок, чаш и глазурированной крышки, датируемых XII—XIII вв. Наиболее интересной находкой клада является поливная миска, в центре которой изображен мужчина в длиннополом одеянии, из-под которого видны ноги. Согнутые в локтях руки подняты вверх. Покрытая тиарой голова изображена стилизованно—с вытянутым лицом, с неровными скулами, прямым носом, миндалевидными глазами, густыми бровями и небольшой клиновидной бородой. В нижней части платья имеется надпись «Сурб Ганес». Иконографический анализ синхронных мошехранильниц, окладов, кадил, миниатюр и т. д. дал возможность установить, что на сосуде изображен Иоанн Креститель, что впервые зафиксировано на керамических изделиях.

---

16 Ն. Գ. Հակոբյան, Միջնադարյան Հայաստանի գեղարվեստական մետաղը IX—XIII դարերում։ Երևան, 1981, էջ 67։

17 Ն. Գ. Հակոբյան, Ի. Գ. Ղարիբյան, Հ. Ա. Մելքոնյան, Միջնադարյան Հայաստանի խնկամանները (Բանբեր Երևանի պետական համալսարանի, Երևան, 1988, № 1, էջ 117)։